ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 09 » 03 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000021

Ձեռնարկողը՝ ***«Ճարտարապետական արվեստանոց Աղեկյան» ՍՊԸ***

Գործունեությունը՝ ***Արաբկիր վարչական շրջանի Գ. Գյուլբենկյան փողոց 30 և 30/4 հասցեներում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դռնոյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000021

< 09 > 03 2020թ.

Արաբկիր վարչական շրջանի Գ. Գյուլբենկյան փողոց 30 և 30/4 հասցեներում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝ «Ճարտարապետական արվեստանոց Աղեկյան» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Գ. Գյուլբենկյան փողոց 30 և 30/4 հասցեներում «ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ 30» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ համալիր:

Գործունեության համար նախատեսվող տարածքը գտնվում է Գյուլբենկյան փողոցին հարակից կառուցապատման գոտում և Հրաչյա Քոչար փողոցին հարող հատվածում: Կառուցապատվող հողամասը զբաղեցնում է 0.25529 հա տարածք, որը սեփականության իրավունքով պատկանում է Ընկերությանը: Հողամասում առկա են քանդման ենթակա շինություններ /վարչական շենք և ավտոտնակներ/: Հատկացվող հողամասում կառուցապատման համար նախատեսված տարածքի մակերեսը կազմում է 1533մ^2 /ներառյալ՝ ասֆալտապատ և սալիկապատ տարածքները/:

Նկարագրական մաս. Բազմաֆունկցիոնալ համալիրի նախագծման համար Երևանի քաղաքապետարանի կողմից տրվել է N 01/18-07/2-69011-980 առ. 02.10.2019թ. նախագծման թույլտվությունը (ճարտարապետա-հատակագծային առաջադրանք): Համաձայն նախագծի՝ բազմաֆունկցիոնալ համալիրը ձևավորվելու է հ. 27122018-01-0352 և հ. 27122018-01—0386 վկայականներով ամրագրված հողամասի սահմաններում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Տեղամասում մինչև 40 մետր խորությամբ փորված հորատանցքով ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1096.0-1099.0 մետրի սահմաններում: Հողամասում առկա երեքը ծառերը պահպանվելու են, իսկ մեկը՝ վերատնկվելու է:

Գործունեության ենթակա տարածքի հարևանությամբ գտնվում են բնակելի և հասարակական շենք-շինություններ: Կառուցապատվող տարածքին մոտեցումը կապահովվի առկա ճանապարհներով, որոնք անցնում են հողամասի երկու կողմերով: Հողամասին կից տարածքներով անցնում են գործող ինժեներական ենթակառուցվածքները:

Բազմաֆունկցիոնալ համալիրը նախագծվել է 3 նկուղային հարկերով, որոնք ծառայելու են որպես ստորգետնյա ավտոկայանատեղի, երեք՝ հասարակական նշանակության վերգետնյա հարկերով և 14 բնակելի հարկերով: Բնակելի շենքի հարևանությամբ նախատեսված է նաև կառուցել էլեկտրական ենթակայան: Բակային տարածքում ստեղծվելու է կանաչ գոտի, ուր կտեղակայվեն սպորտ հրապարակ, մանկական խաղահրապարակ և զրուցարան:

Ստորգետնյա ավտոկայանատեղին նախատեսված է բոլոր բնակիչների ավտոմեքենաների համար: Մեքենաների մուտքը ստորգետնյա ավտոկայանատեղի նախատեսված է երկկողմանի՝ բաց թեքահարթակներով, լուսացույցային կարգավորումով:

Շենքի առաջին երեք վերգետնյա հարկերը հասարակական բազմաֆունկցիոնալ նշանակության են: Բնակելի հարկերը նախատեսված են 56 հատ բնակարանների համար: Դրանք տիպարային են՝ բաղկացած 4 սենյականոց, 3 սենյականոց և 2 սենյականոց բնակարաններից: Կառույցում նախատեսված է նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ:

Բոլոր մուտքերն ապահովված են թեքուղիներով: Շենքում նախատեսվում են երկու վերելակ՝ 400 և 1000կգ բեռնաբարձությամբ: Նրանցից 1000կգ-անոցը նախատեսված է հրշեջ ստորաբաժանում տեղափոխելու համար:

Շենքի միջանցքները սարքավորված կլինեն ծխահեռացման համակարգով: Բնակարաններում նախատեսված են ինքնաշխատ ծխային հրդեհային ազդարարարման սարքեր:

Շենքի ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրված՝ «Ջրամիացման, ջրահեռացման, հեղեղատարին միացման և հակահրդեհային հիդրանտի տեղադրման» /թիվ ԱՄ 435 տրվ. 15.11.2019թ./ տեխնիկական պայմաններին համապատասխան: Ջրամիացումն իրականացվելու է Գյուլբենկյան փողոցով անցնող 300 մմ տրամագծի ջրագծից: Ջրահեռացման միացման կետը տարածքի հարևանությամբ անցնող 700 մմ տրամագծի գործող կոյուղագիծն է:

Գազամատակարարումը՝ 330 խմ/ժամ նախատեսվող ծախսով իրականացվելու է Արծրունու փողոցի 160 մմ տրամագծի միջին ճնշման գազատարից՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից 12.11.2019թ. տրված տեխնիկական պայմաններին համապատասխան: Բազմաֆունկցիոնալ համալիրի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը բնակարաններում իրականացվելու է անհատական կաթսաների միջոցով:

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը կատարվելու է կազմակերպված եղանակով՝ Քոչարի փողոցով անցնող կոյուղու համակարգի միջոցով: Նույն ցանցով կհեռացվեն նաև շենքի տանիքներից հավաքվող անձրևաջրերը և օդորակման սարքավորումներից առաջացող կոնդենսատները:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներ են.

Հողամասի մակերես՝	2552.9 մ²
Կառուցապատման մակերես՝ /վերգետնյա ծավալ/	840 մ²
Բնակարանների քանակ՝	56 հատ
Ստորգետնյա ավտոկայան՝	105 ավտոմեքենայի համար
Բակային տարածք՝ /Կանաչապատման մակերես/	1020 մ²
Ասֆալտապատ և սալիկապատ հատվածներ՝	693 մ²:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է միմյանց հաջորդող երկու փուլերով՝ վարչական շենքի և ավտոտնակների ապամոնտաժում և բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում: Աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմում է 48 ամիս, որից 4 ամիսը նախատեսված է քանդման աշխատանքների համար:

Հողամասում գոյություն ունեցող շինությունները քանդվելու են ապամոնտաժման եղանակով, որի ընթացքում, փոշու կանխման նպատակով, նախատեսված է ջրցանի իրականացում: Ապամոնտաժման աշխատանքներում կբացառվեն խոշոր քանդող տեխնիկայի կիրառումը, կօգտագործվեն ձեռքի կտրող գործիքներ: Աշխատանքների արդյունքում հնարավորինս կպահպանվեն նյութերը և հետագայում շինարարական աշխատանքներում կօգտագործվեն: Քանդման աշխատանքների ընթացքում տարածքի 200քմ մակերեսում առկա ասֆալտբետոնյա ծածկույթը կհանձնվի այն վերամշակող կազմակերպություններին:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են՝ ժամանակավոր ցանկապատի տեղադրում, կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում՝ միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին, ժամանակավոր շինությունների տեղադրում: Շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է շինհրապարակների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինարարական աշխատանքների համար, որը կապահովվի քաղաքային ջրամատակարարման ցանցից: Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի պահեստներ: Ապրանքային բետոնը շինհրապարակ է բերվելու պատրաստի վիճակում՝ բետոնաշաղախային հանգույցից:

Շինարարական աշխատանքներից բուսահող չի առաջանում, քանի որ օգտագործվելու են ամբողջությամբ կառուցապատված տարածքները: Հողային աշխատանքների ժամանակ մշակվող գրունտի ծավալը կկազմի՝ 9200 մ^3, որից 850 մ^3-ը կօգտագործվի հետլիցքի համար: Շինությունների քանդման աշխատանքներից կառաջանա ընդհանուր 4614.5 մ^3 ծավալով շինարարական աղբ, որի մի մասը կօգտագործվի շինարարների կողմից, իսկ մնացած մասը՝ հողային աշխատանքներից առաջացող 8350 մ^3 մնացորդային հողային գրունտի և շինաղբի հետ միասին սահմանված կարգով շինհրապարակից կհեռացվեն արտոնագրված աղբավայրեր՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կառաջանան առկա շինությունների ապամոնտաժման, նոր շինությունների կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից: Հայտում հաշվարկվել են քանդման աշխատանքներից և հողային աշխատանքներից առաջացող փոշու արտանետումների քանակները: Շինությունների քանդման և բազմաֆունկցիոնալ համալիրի շինարարության ընթացքում օդային ավազանը աղտոտումից պահպանելու միջոցառումները ներառում են՝ տարածքի ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների թափքի ծածկում, շինհրապարակի ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, շինհրապարակ մուտք գործող և դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում, շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում և կարգաբերում:

Հարակից տարածքներում աղմուկի մակարդակի նվազեցման միջոցառումները ներառում են՝ շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում ցերեկային ժամերին, աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, կամ խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգում և կարգաբերում:

Սոցիալական ազդեցություններից խուսափելուն կամ մեղմելուն ուղղված միջոցառումները ներառում են՝ մոտակա բնակչության իրազեկումը նախատեսվող

շինարարական աշխատանքների և հնարավոր ազդեցությունների /պատճառվող անհանգստություն, երթևեկության ծանրաբեռնվածություն, փոշու քանակների ավելացում և այլն/ վերաբերյալ, շինարարական աշխատանքների և բեռնատար մեքենաների համար ժամանակացույցի մշակումը, համապատասխան ցուցանակների տեղադրումը, ժամանակավոր անցուղիների կամ այլընտրանքային ճանապարհների նախատեսումը:

Որպես կարևոր միջոցառում՝ շինարարական աշխատանքերի ընթացքում նախատեսված է կառուցվող շենքը ծածկել փոշու տարածումը կանխող համապատասխան ցանցով:

Շրջակա տարածքներն աղտոտումից զերծ պահելու նպատակով նախատեսված է քսայուղերի, հեղուկ վառելիքի մնացորդային քանակները շինհրապարակում պահել անթափանց, փակ տարաներում՝ հետագայում որպես երկրորդային նյութ կրկնակի օգտագործման կամ վերամշակող կազմակերպություններին հանձնելու համար:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում (շինարարություն, շահագործում) բացասական ազդեցությունները կանխարգելող և մեղմացնող միջոցառումները ներառված են ԲԿՊ-ում և իրականացվելու են կապալառու կազմակերպության կողմից:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կառուցապատողի կողմից կիրականացվի մոնիթորինգ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի և իրականացվող բնապահպանական միջոցառումների համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է կանաչապատել՝ իրականացնելով ծառատունկ և ստեղծելով սիզամարգ: Կանաչապատման աշխատանքները /ներառյալ գոյություն ունեցող ծառերի պահպանումը և վերատնկումը/ համաձայնեցվել են Երևանի քաղաքապետարանի հետ և իրականացվելու են տարածքների բարեկարգման և կանաչապատման նախագծին համապատասխան: Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի բերումը նույնպես կիրականացվի Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված: Կանաչապատ տարածքների ոռոգումն ապահովվելու է տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման համակարգին միանալու միջոցով:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացավ հավանության: Փորձաքննության ընթացքում հաշվի է առնվել նաև Երևանի քաղաքապետարանի և քաղաքաշինության կոմիտեի կարծիքները:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք շինարար կապալառուի կողմից կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական մեղմացնող միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջ

- Քանդման և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ճարտարապետական արվեստանոց Աղեկյան» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Արաբկիր վարչական շրջանի Գ. Գյուլբենկյան փողոց 30 և 30/4 հասցեներում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մկրտչյան